

ԽԵԼԱՅԻ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ



ԿԿՈՒ

Մանկապատանեկան Թերթիկ

ԱՊՐԻԼ Ա - 2024
Թիւ - 13 -



Թիւր պատրաստեց՝
ՄԱՐԻՆԷ ԱՐՈՏԵՆ-ՇԱՀԻՆԻԱՆ
Նկարազարդեց՝
ՌԱՅՅԻ ՔԵՇԻՇԵԱՆ

Միայն մարդ արարածը չէ, որ կրնայ իր կեանքը դիրացնել: Անասուններուն վրայ կատարուած կարգ մը ուսումնասիրութիւններ մեզ կը ստիպեն ընդունիլ, թէ անոնք ալ գիտեն իրենց առօրեան բարելաւել առարկաներու կամ յատուկ թեքիքներու շնորհիւ: Օրինակ ջրադուները խեցիները կը կտրեն շնորհիւ քարի մը, զոր զգուշութեամբ կը պահեն: Ասիոյ փիղերը ճիւղեր կը գործածեն ճանճերը հեռացնելու համար... Առայժմ շեմփանզէները կը գտնուին ամենէն «հնարագէտ» անասուններու ցանկին զուխը:

Գիտնականները տարբեր խումբերու մէջ նշմարած են բազմաթիւ օրինակներ, մրջիւններու կամ մեղրի արտահանում՝ փայտիկներու միջոցով: Տերեւ «ներբաններու» շինութիւն փշոտ ծառերուն վրայ ոտքերը պաշտպանելու համար: Տերեւներու գործածութիւն՝ սպունգի ծառի փոսիկներուն մէջ շուրջ հաւաքելու համար... Գիտնական մը նոյնիսկ ուսումնասիրած է մայր շեմփանզէներ, որոնք իրենց ձագերուն կը սորվեցնեն գործածելու ձեւը ընկոյզ կտրելիքի մը, զոր իրենց խմբակին անդամները կը գործածեն որոշ պտուղներ կտրելու համար:

ՇԵՄՓԱՆԶԵՆՆԵՐԸ

Ուկանտացի շեմփանզէները շատ կանոնաւոր ձեւով կը ծալեն եւ կլորակ ձեւով կը կլլեն իրենց կերած բոյսերէն քիչ մը աւելի մագոտ բոյս մը: Անոնք այս բոյսերը կը գործածեն իբրեւ դեղ՝ աղիքներու որդերուն դէմ: Անոնք մագերուն շնորհիւ այս տերեւները ծուղակի մէջ կը ձգեն որդերը, որոնք ետքը դուրս կ'ելլեն անասունին աղտոտութիւններուն հետ: Այս մարդակապիկները կ'ուտեն նաեւ պտուղներ կամ կոճղի կեղեւներ իրենց փորի ցաւերը կամ վերքերը դարմանելու համար:



ԽԵԶԱՓԱՌՆԵՐԸ

Պզտիկ խեչափառները բնաւ դուրս չեն ելլեր առանց իրենց աքցաններուն ծայրը բռնելու ծովու հարսուկներ, որոնց դպչելու պարագային այրուածքներ կը յառաջանան: Երբ թշնամի մը կը ներկայանայ, օրինակի համար ընգղայ մը, խեչափառը անոր դէմ կը պարզէ իր «զէնքերը»: Ծովահարսուկները խեչափառին կը ծառայեն նաեւ ուտելիք հաւաքելու համար: Խեչափառը հարսուկները կը շփէ ծայրերուն, ապա կ'ուտէ մանր անասունները, որոնք այրուածքին չեն տոկար: Հարսուկն ալ կ'օգտուի այս «ընկերակցութենէն», ան ալ կ'ուտէ մնացորդները:

ԱԳՌԱՒՆՆԵՐԸ

Նոր Զալետոնիոյ ագռաւներուն համար միջատներու իւղոտ թրթուրները շատ համեղ ուտելիքներ են: Չանոնք կոճղերու փոսիկներուն մէջէն հաւաքելու համար այս ագռաւները կը գործածեն տեսակաւոր գործիքներ զորս անձնապէս կը շինեն: Այսպիսով, անոնք մանր ճիւղերուն ծայրերը կը ծռեն կամ կը կտրեն կարգ մը մեծ «տերեւներու» «ակոռները»՝ զանոնք իբրեւ կարթ գործածելու համար:


Գիտաշխատանոցի փորձերը փաստած են, թէ ագռաւի այս տեսակը ձիրքեր ունի յատկապէս խրթին պարագաներ լուծելու՝ գործիքներու օգնութեամբ, մանաւանդ երբ հարցը ուտելիքի հետ կապուած է:

1	8	8	8	2	3	6	8	7	3
4	3	5	5	6	9	1	8	2	2
6	6	3	7	8	2	8	3	6	8
3	6	4	10				2	8	4
3	8	7					8	1	9
7	2	5					2	6	9
7	7	4					5	9	6
5	3	2					6	9	8
5	7	7	3	2	6	9	9	2	9
1	9	5	5	9	4	1	8	7	1

Իւրաքանչիւր գոյգ թիւ որոնց գումարումը կ'ընէ 10, շրջանակի մէջ ա՛ն տրուած օրինակին պէս:



Գունաւորե՛ հետեւեալ պատկերը նախասիրած գոյներով:



Կրնա՛ս լուծել:

$4 - 2 =$
 $+$
 $=$
 $- 7 = 2$
 $+$
 $+ 6 =$
 $=$
 $- 5 =$
 $- 1$
 $= 8$
 $9 -$
 $=$
 $3 + 3 =$
 $- 1 =$
 $=$
 $+ 8 =$
 $+ 3 =$
 $=$
 $- = 5$
 $+ 5 =$
 $=$
 $- 4 =$

Քառակուսիները հաշուելով պատկերները ընդօրինակե՛ միւս կողմը:



ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Վերջին շիկո

Ճակատամարտը վերջացած էր: Յեռուէն դեռ կը լսուէին յաղթանակող զօրքերուն համազարկերն ու փողերուն ձայները: Կռուի դաշտին մէջ թափած էին կոտորած սայլեր ու հրացաններ, փշրուած սուրբեր: Քանդուած ցանկապատերուն մէջ ինկած էին մարդոց եւ ձիերու դիակներ այլանդակուած ու յօշոտուած: Սպանուածներու զանգուածներուն մէջէն տեղ-տեղ կը լսուէին վիրաւորներու խոր հառաչանքներ:

Չորցած առուի մը եզերքը, խիտ եղիճի (ցաւ եւ քերուղտուք պատճառող բոյս) մը մէջ իրարու մօտիկ պառկած էր երկու զինուոր, երկուքն ալ՝ ծանրօրէն վիրաւորուած:

Անոնց համազգեստները տարբեր էին: Դեռ քանի մը ժամ առաջ անոնք թշնամիներ էին, իրարու դէմ կայնած, պատրաստ սուիներով զիրար սպանելու, իսկ այժմ...

Այժմ լուռ կը նայէին իրարու եւ այնպէս կ'ուզէին խօսիլ, գոնէ բան մը ըսել, բայց, ափսո՛ւ, որ իրարու լեզու չէին հասկնար: Տարիքով փոքրը դժուարութեամբ մէկ երկու քայլ սողալով մօտեցաւ թշնամիին եւ երկարեց անոր իր ջուրի սրուակը, ապա փորձեց թաշկինակով կեցնել անոր վերքէն հոսող արիւնը: Բայց՝ անօգուտ, ան աւելի եւս թուլցաւ ու պառկեցաւ:

Երբեմն մէկը, երբեմն միւսը քիչ մը բարձրանալու ճիգ կ'ընէր, օգնութիւն կը կանչէր, բայց անոնց կանչերուն մօտիկէն միայն պատասխան կու տար փորը պատռած ձիու մը աղէկտուր խրխիւնջը:

Վերջապէս երիտասարդը, յոգնած եւ թուլցած, քուն մտաւ: Վրայ հասաւ պարզկայ գիշերը: Յուրտ հովը կը փչէր հեռաւոր լեռներէն: Կռուի դաշտին մէջ աւելի ու աւելի կը նուազէին հառաչանքները, վիրաւոր ձիւն ալ չէր խրխիւնջար:

Կես գիշերին, տարիքով աւելի մեծ վիրաւորը կրկին նստելու փորձ մը ըրաւ, բայց ի զուր, արդէն բոլորովին արիւնաքամ եղած էր: Մահուան պաղուբիւնը սկսած էր պատել զայն: Աչքը քովը պառկած զինուորին վրայ ձգեց: Երիտասարդ վիրաւորը խոր քունի մէջ էր եւ պրկուած ու կծկուած էր գիշերուան սաստիկ ցուրտէն:

«Պիտի սառի», անցաւ միտքէն, «անպատճառ պիտի սառի խեղճը, որքան ալ երիտասարդ է»:

Երբ առտուան դէմ վիրաւորներ հաւաքող խումբը մօտեցաւ անոնց, երիտասարդը արթնցաւ, ուզեց բարձրանալ ու զարմացաւ որ իր վրայ վերարկու մը կայ:

Նայեցաւ շուրջը, նայեցաւ քովի զինուորին: Ան մեռած էր եւ պառկած առանց վերարկուի:

Ի՛նչ չարչարանք կրած պիտի ըլլար իր հոգեվարքին մէջ արիւնաքամ եղած այդ մարդը, մինչեւ որ կարենար վերարկուն հանել եւ ծածկել քովը պառկած վիրաւորը:

Երբ երիտասարդը կը բարձրացնէին որ տանին, ան խորին յուզումով ու երախտագիտութեամբ կը նայէր «թշնամիին» տանջուած ու գունատ դէմքին ու չէր կրնար նայուածքը հեռացնել անոր կիսախուփ աչքերէն:

ՋԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

ԻՆՉՈՒՒՄ ՕՁԵՐԸ ԵՐԿՃԻՂ ԼԵՉՈՒ ՈՒՆԻՆ

Օձի լեզուն չի ծառայեր իր որսերը խայթելու, այլ՝ անոնց դիրքը ճշդելու: Անհկա շատ զգայուն է եւ կրնայ զգալ գետնին վրայ, օդին կամ ջուրին մէջ անասունի մը ձգած քիմիական հետքերը: Շնորհիւ իր բարակ ձեւին եւ երկու սուր ծայրերուն՝ անհկա շատ ճկուն է, այս ձեւով օձը կրնայ շատ արագ շարժուիլ իր որսը:



ՄՐՋԻՆՆԵՐԸ ՈՐՔԱՆ ԲԵՌ ԿՐՆԱՆ ՇԱԼԿԵԼ

Մրջինները շատ զօրաւոր են: Ոմանք կրնան իրենց ծանրութենէն յիսուն անգամ արագ թռչել: Երեւակայէ՛, որ դուն կռակիդ վրայ շալկած ես մէկուկէս թոն, որ համապատասխան է պզտիկ ինքնաշարժի մը ծանրութեան:



ՈՐՆ Է ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԵՆ ՄԵԿՈՒՍԱՑԱԾ ՅՈՂԱՄԱՍԸ

Անհկա կը գտնուի Աթլանթեան օվկիանոսին մէջ: Քրիսթան տա Քունիա հրաբխային կղզին ունի 278 բնակիչ, որոնք կ'ապրին 2500 քմ. հեռու ամենէն մօտիկ բնակուած վայրէն՝ Սենթ-Յելեն կղզին:

